206

1. Դուք այսօր ընտրել եք նեղ ճամփան ձեր կյանքում,
Ցանկացել եք երկուսով սիրով քայլել,
Դուք գիտեք, որ միշտ չեն այդ ճանապարհին
Հոտավետ ծաղիկներ հանդիպում:

Կյանքն ապրելը արտ չէ՝ անց կենաս,
Կյանքն ապրելը գետ չէ, որ լողաս,
Կյանքն ապրել, Քրիստոսի հետ քայլել,
Ցնծությունն ու ցավը երկուսով տանել:

2. Հաճախ արցունքներ կթափվեն ձեր աչքերից,
Կթվա ամեն բան հակառակ,
Կա շատ բան, որ կախված է հենց ձեզանից,
Դիմե՛ք Հիսուսին դուք համարձակ:

3. Եթե Քրիստոսը լինի միշտ ձեր կյանքում,
Սերը կպատի ձեզ հավիտյան,
Որքան էլ դժվար լինի ձեզ պայքարում,
Պահպանե՛ք այդ սերը միության:

4. Որպեսզի երջանիկ լինեք ձեր կյանքում,
Կա կանոն, որ պետք է պահպանեք,
Ինչպես Հիսուսը, դուք էլ միմյանց սիրե՛ք,
Սիրով միմյանց բազում մեղքերը ծածկեք: